ԲԱՐՁՐԱՍՏԻՃԱՆ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԱՆՑ ԷԹԻԿԱՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

«ՄԱՐԱԹՈՒԿ ՀՈԼԴԻՆԳ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ Տ. ՎԱՐԴԱՆՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ ՎԱՐՈՒՅԹ ՀԱՐՈՒՑԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

16-Ա

Ք. Երևան 18 փետրվարի 2016թ.

Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովը՝ կազմով՝ Ս. Սահակյանի (նախագահող), Ա. Խուդավերդյանի, Լ. Պետրոսյանի, Ա. Սարգսյանի, Է. Շաթիրյանի,

«Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 44-րդ հոդվածի հիման վրա քննարկեց «Մարաթուկ Հոլդինգ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն Տիգրան Վարդանյանի (այսուհետ՝ դիմող) դիմումը ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի նախագահ Արտակ Շաբոյանի կողմից էթիկայի կանոնների խախտման վերաբերյալ:

Դիմողը գտնում է, որ ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի նախագահ Ա. Շաբոյանը 2015 թվականի հունիսի 20-ին արված հայտարարությամբ թույլ է տվել «Հանրային ծառայության մասին» ՀՀ

օրենքի 28-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված բարձրաստիճան պաշտոնատար անձի էթիկայի կանոնների խախտում:

Դիմումին կցված է «Փաստինֆո» լրատվական գործակալության հրապարակումն այն մասին, որ 2015 թվականի հունիսի 20-ին Ծաղկաձոր քաղաքում ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի նախագահ Ա. Շաբոյանը հանդես է եկել հետևյալ հայտարարությամբ. «Տուրիստական կազմակերպությունները փաթեթային էժան առաջարկներ են գովազդում, իսկ երբ քաղաքացին այցելում է իրենց գրասենյակներ, ասում են, որ էժան փաթեթներն արդեն սպառվել են և «ստիպում» օգտվել թանկ փաթեթից: Ավելին՝ բուկլետներում տեղադրում են գեղեցիկ վայրերի, քաղաքների լուսանկարներ և միայն տեղ հասնելուց է անձը, քաղաքացին պարզում, որ իրեն խաբել են և նման հնարավորություն ինքը չի ունենալու: Օրինակ՝ «Մարաթուկ» ընկերության նկատմամբ Հանձնաժողովը վարչական վարույթ է հարուցել. վերջինս մոլորեցրել է քաղաքացիներին՝ բուկլետներում ներառելով իբր Կրետե կղզու լուսանկարը, որն իրականությանը չի համապատասխանել»:

Որպես իր դիրքորոշման հիմնավորում՝ դիմողը վկայակոչում է 2005 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության մի շարք հոդվածներ՝ դրանց համակարգային վերլուծության արդյունքում հանգելով այն եզրահանգմանը, որ որպես օրինականության սահմանադրաիրավական սկզբունքի իրացում պետական մարմինները և դրանց պաշտոնատար անձինք պարտավոր են հարգել առևտրային իրավաբանական անձանց գործարար համբավը և վարչաիրավական հարաբերություններում «անմեղության կանխավարկածի» սկզբունքը: Դիմողը հղում է կատարում նաև «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի, ինչպես նաև «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի մի շարք դրույթներին:

Դիմողը գտնում է, որ օրինական ուժի մեջ մտած, անբողոքարկելի վարչական ակտի բացակայության պայմաններում ընկերությանն իրավախախտ ներկայացնելու վերաբերյալ Հանձնաժողովի նախագահի հրապարակային հայտարարությունը

նսեմացնում է կոլեգիալ կառավարման մարմնի դերը և վարչական վարույթի նշանակությունը՝ հանգեցնելով հանրային անվստահության:

Վերոշարադրյալի հիման վրա դիմողը խնդրում է հարուցել վարույթ և ձեռնարկել միջոցներ ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի նախագահ Ա. Շաբոյանի կողմից բարձրաստիճան պաշտոնատար անձի էթիկայի կանոնների խախտումները վերացնելու և (կամ) կանխարգելելու կապակցությամբ:

Հիմք ընդունելով «Մարաթուկ Հոլդինգ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն Տիգրան Վարդանյանի դիմումը և ղեկավարվելով «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 44-րդ հոդվածով.

Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովը

ՈՐՈՇՈՒՄ Է.

1. «Մարաթուկ Հոլդինգ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն Տիգրան Վարդանյանի դիմումի հիման վրա հարուցել վարույթ:

2. Առաջարկել ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի նախագահ Արտակ Շաբոյանին սույն որոշումը ստանալուց հետո տասնօրյա ժամկետում ներկայացնել քննարկվող հարցի վերաբերյալ իր առարկությունները և բացատրությունները:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ **Ս. ՍԱՀԱԿՅԱՆ**